

— «Պաշտպանեցէ՛ք հայոց դատը, քաղաքակրթութեան դատն է այն»:

Եւ կը սիրէր Լուցցատտի վերջին տասներկու տարուայ ընթացքին — երբ առանձին թափ ու եռանդով, իբրեւ մեծագոյնը մեր իտալացի բարեկամներէն, կ'արծարծէր հայոց անկախութեան գաղափարը մամուլի մէջ, պարլամենտում ու քաղաքական շրջաններում — կը սիրէր նա յիշատակել Գլադստոնի անունը եւ իր գաղափարային ազգակցութիւնը անոր հետ:

Եւ նոյնը շեշտեց 1918-ի իր հոյակապ ճառին մէջ — հայկական խնդրի մասին Իտալիոյ խորհրդարանում: Վայրկեանը հանդիսաւոր էր: Մեծ էին յոյսերը մեր ու բարեկամներու շրջաններում: Դաշնակիցներու յալթանակի ղօղանջը տարտամօրէն կը հնչէր արդէն օդին մէջ: Ութսունամեայ ծերունին բեմ բարձրացաւ ընդհանուր յարգանքի ցոյցերուն մէջ իր խօսքն ըսելու Հայաստանի մասին: Իր խօսքը՝ պարլամենտին, կառավարութեան, Իտալիային, Եւրոպային: Ճառ մըն էր Դանտէի գեղեցկագոյն ու թեւաւոր բարբառով: Սօսողը՝ նախկին վարչապետ մը, պարլամենտի փառքերէն մէկը, ճշմարիտ պատրիարք մը, պարթեւահասակ եւ ալեղարդ, թաւ յօնքերով, խորունկ ու խոհուն աչքերով: Հայ ժողովրդի ողբերգական դատը չէր կարող գտնել աւելի անկեղծ ու պերճախօս փաստաբան մը, այդ պատմական օրերուն:

Ծափահարեցին ամէնքը՝ պահպանողականներէն մինչեւ ընկերավարականներ ու կոմմունիստներ: Ողջ պարլամենտը ընդունեց Հայաստանի անկախութեան պահանջը, ձեւակերպուած Լուցցատտիէն: Կառավարութիւնը որդեգրեց զայն Օրլանտոյի հանդիսաւոր յայտարարութեամբ:

Եւ Օրլանտո չբաւարանալ իր խոստման: Օրլանտո — Իտալիայի ամենէն գրաւելի դէմքերէն մէկը, այժմ տարաբախտաբար մէկ կողմ նետուած Փաշիզի յետադիմական յորձանքով — պաշտպանեց հայոց անկախութիւնը Պարիզեան Վեհաժողովում: Իտալիան հաւատարիմ մնաց իր ուխտին, որ ըրած էր Լուցցատտի խանդավառող ճառէն յետոյ: Օրլանտո եւ Լուցցատտի — երկու վաղեմի, մտերմագոյն բարեկամներ — հպարտ էին իրենց

գործով, հպարտ՝ իրենց հայասիրութեամբ: Օր մը Ծերակոյտի սրահին մէջ ինձի ներկայացնելով Օրլանտոյին, կ'ըսէր անոր կատակով.

— «Դուն գիտես, որ ես Հայաստանի հայրն եմ»... (Io sono il padre dell' Armenia):

Միւսը կը պատասխանէր.

— «Ես ալ անոր եղբայրը» (Io ne sono il fratello):

Նիտտիի, Մֆօրցայի օրով իտալական քաղաքականութիւնը, ազդուած Ֆրանսիոյ թըրքամով ընթացքէն եւ Յունաստանի արտակարգ ծաւալումէն, նպաստաւոր չեղաւ հայկական դատին: Բայց ամէն պարագայի՝ այդ դատի գերեզմանափորը Իտալիան չեղաւ...

\* \* \*

Առաջին անգամը տեսայ մեծ ծերունին 1915-ի յունուարին, երբ Ռոստոմի ու այլ ընկերներու յանձնարարութեամբ (այն ատեն ժընեւ էին) դացի շօշափելու Հոռմի քաղաքական շրջաններու տրամադրութիւնը: Կազմեցինք Հոռմի մէջ «Հայկական Անկախութեան Կոմիտէ» մը: Նախագահը՝ Լուցցատտի: Անդամները՝ հանգուցեալ Բիսսօլատի, նախկին վարչապետ Բօնօմի եւ ուրիշներ: Իտալիան տակաւին չէր մտած պատերազմի մէջ եւ նորակազմ կոմիտէն կը ստանձնէր հայոց անկախութեան պաշտպանութիւնը իր երկրում:

Յետագային այն դարձաւ «Իտալո-Հայ Կոմիտէ», նախագահը Դի Չեղարօ, ապա դարձեալ Լուցցատտի: Կոմիտէի անդամներէն էր եւ հռչակաւոր անտեսագէտ Պանթալէօնի:

Հայեր քիչ կային արդէն Իտալիոյ մայրաքաղաքում. գործի հողին էր Լուցցատտի:

1918-ին Տամատեան Հոռմ զնաց քանի մի ամսով, որպէս ներկայացուցիչ Հայ Միացեալ Պատուիրակութեան եւ մեծ գարկ տուաւ հայ դատի պրօպագանդին:

1920 թ. փետրուարին հաստատուեցաւ Հոռմի մէջ անկախ Հայաստանի դեսպանատունը, գրեթէ կէց Լուցցատտիի ընակարանին. եւ այնուհետեւ համակրելի ծերունին մշտնջենաւոր խորհրդատուն էր Հայաստանի ներկայացուցչի, որու առջեւ ամէն վայրկեան բաց կը մնար անոր դուռը: Հարագատ հօր պէս էր մեզի համար:

«Ա՛հ, երանի գէթ տասը տարով երիտա-